

ամանը գործածողները, ձիոյ կամ նապաստակի միս կամ մկնապիղծ կերողները (ԽԵ, ԼԸ):

2. — Աղօրք: — Պաշտօն մ'ալ կը կատարէին պիղծ կերակրէ ճաշակողաց վերայ, հաւանօրէն ապաշխարութենէն վերջ քան յառաջ. եւ այս՝ փոխան Հրէից զոհին՝ զոր կը մատուցանէր ակամայ պրղծեալը (ՂԵՄ. Գ), ուր կամաւորապէս ճաշակողը կը սպանուէր (անդ, է, 19-27): — Հին մաշտոցք, սկսեալ Ս. Ղազարու երիցագոյն օրինակէն (ԺԱ դարու), աղօթից երկու ձեւ ունին, որոց բովանդակութենէն կ'իմացուի՝ թէ մին պատահաբար եւ յանգէտս պղծելոց համար է, եւ միւսը՝ հեթանոսաց գերութեան մէջ առ հարկի եւ գիտութեամբ անմարդ կերակուր կերողաց համար: Համեմատութիւն մը սոյն աղօթից՝ յոյն Եւքարոգիոնի հետ, ըստ հրատարակութեան Գոյարի, ցոյց տուաւ ինձ՝ որ երկուքն ալ յունարենէ թարգմանուած են (Գոյ. 534-5):

Առաջնոյն վերնագիրն է՝ «Աղաւթք որ պիղծ ինչ կերեալ է». եւ բովանդակութիւնն է այս. «Տր. Ա.ձ. մեր՝ որ ի սուրբս ես հանգուցեալ, եւ զովեալ յԵղէ. (յիսրայեղէ), խոնարհեցոյ եւ այժմ՝ զունգն քո եւ լուր մեզ, եւ պարգեւեա զթողու-